



ԼԻՆՈՒՒ

ԼԻՆՈՒՒ

ԹՈՒՌՆԵՆԻ, ՀԵՅԲԵՆԵՄԻՐ ԹԵՒՕՐ
ՅԵՐԵՐՈՒՆԻ ԴԱՀԼՆ Ի ՂԱՆՏՈՍՊ

ԹԻՒ 7 — ԴԵՊՅԵՄԵՐ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԻԻՍՏՐԻՏԵՐ

ԸՆԴ ՀՈՂԱՆԵՄԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵՊԵՆՑԻՈՅՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԾՈՒՈՅՆ ՂԱՍՊՈՒՐԱՊԱՆ

1855 — ԹՅԴ

11-1877

THE NEW YORK PUBLIC LIBRARY
ASTOR LENOX TILDEN FOUNDATION
125 WEST 4TH STREET
NEW YORK

11-1877

THE NEW YORK PUBLIC LIBRARY
ASTOR LENOX TILDEN FOUNDATION
125 WEST 4TH STREET
NEW YORK

11-1877



ԵՐԾՈՒՒ

ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՌՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕԲ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ԳԱՀԷՆ Ի ՎԱՆՏՈՍՊ

ԱՍԱՐԻ, 1855

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 7

ՀԱՅՐԵՆԵՍՈՒՐԱԿԱՆ

ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԿԻՐԱԿՈՍ ԱԶԳԱՍԷՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ:

ԵՐԾՐՈՒՆԻՆ ԹՈՒՄԱ ՃԱՐՏԱ-
րախօս պատմագիրն յաղագս զարմա-
նագործ եւ հրաշակերտ տաճարին
Աղթամարոյ գրէ ՚ի կարգս պատմու-
թեան իւրում բազմապատիկ դրուա-
տանօք . եթէ շուրջ եկեալ զաչա-
ածի զհամայն շինուածութիւն չայտա-

տան աշխարհին մերոյ , այլ քան զա-
մենեւին զիս գրաւեալ զարմացոյց
սխրասարանն Աղթամար . որ գերա-
պանծ եւ չքնաղ իմն վայելչութեամբ
կառուցաւ ՚ի Մանուէլ ճարտարա-
պետէն հրամանաւ մեծագործ Ար-
քային Գաղկայ :

Այսպէս եւս Արծուին Աստուծոյ
ական թեպէտ թեւօք հայրենասիրութեան
թուռցեալ 'ի սահմանս Հայոց
կաթողին աչօք դիտեաց զշինուածս
մեծամեծս ճարտարարուեստ ձեռաց
նսխնեաց մերոց . սակայն ստիպիմ
ասել աստանօր ըստ թովմայի Արծ-
րունեոյ , թէ յաւէտ հրաշագոյն եւ
զարմանալի երեւեցաւ մեզ բարձրա-
շէն եւ լայնադիր տաճարն Սաթուղի-
կոսարանին Սոյ . որ կարծի շինեալ
յերկրորդ Լեւոն արքայէն Ռուբին-
եան յանուն էջմիածնայ :

Սակայն առ ժամանակօք անիշխա-
նութեան Արիւկիոյ երկրին եւ ընդ
խոնարհել բարձր եւ հզօր գահուն
Ռուբինեան , գոգթէ սքանչելաշէն
տաճարն եւս ընդ նմին խոնարհեցաւ
յառաջին փառաց իւրոց : Այլ նըշան
մեծաշէն եւ հնագոյն դրից իւրոց
դեռ կայ անկորուստ մինչեւ յայս
դար : Քանզի արեւելեան կոյս խո-
րանին 'ի վեցհարիւր ամաց հետէ
տակաւին 'ի նոյն յառաջին պանծա-
լի շքեղութեան տեսանի . որ ահեղ
խմն բարձրութեամբ ամբարձեալ
լեռնահանդէտ գեպ յերկնս . առ
որում եթէ կացեալ ընդ որմով ար-
աքուստ կողմանէ խորանին 'ի վեր
հայել կամիցիս՝ զարմացումն ածէ
սչաց եւ միանգամայն տանջէ զպա-
րանոց մարդոյ : Արդարեւ ահագին
տեղեւամբ իւրով գոգթէ բարբառ ար-
ձակեալ նշան տայ Հայկազուն հիւս-
նըմար աչաց թէ ձեռք քաջին Լեւոնի
կառուցին զիս վաղուրեմն . եւ ձեռք
նորոյն Զօրաբարէլի նորոգեցին զիս
զարձեալ ըստ առաջին վայելչու-
թեան :

Արդ ով իցէ սոյս նոր Զօրաբարէլ

երեւեալ յերկրին Արիւկիոյ , որ ըզ-
կոտորեալ նշխարս վեհագոյն տաճա-
րիս այսմիկ վերսալին նորոգեալ կեն-
դանացոյց 'ի պարծանս եւ յիշատակ
յաւերթ Լեւոնի պանծալի անուան :
Ասա ով դու երկնասարաս տաճար
Տիրական , Արծուին հանդէպ քեզ
նըստեալ հարցանէ 'ի քէն . ով իցէ
վեհ եւ հայրենասէր ոգին այն , որ
զփառս անշքացեալ տաճարիդ անդ-
րէն 'ի քեզ հաստատեաց . արդեօք
մեծահաշակն 'ի ջանս առաքինի դու-
ծոց վերագիտող ակն տանս Արիւկիոյ
հանգուցեալ Սիրակոս Սաթուղիկոնն :

Այն , մտադիւր ընթերցող , սիր-
ելի է ինձ յոյժ ցանկալի անուանս
քաղցր յիշատակութիւն , որ իբր 'ի
հազար ութ հարիւր երեսուն թու-
ականին՝ ձեռն արկ նորոգել զար-
քայաշէն տաճարս . ճոխագոյն մե-
ծագործութեամբ . Որ թէպէտ 'ի
մէջ օձից եւ կարճաց բնակեալ եւ
բազում անգամ թշնամիք ճշմարտու-
թեան կամեցան յետս կասեցուցան-
ել : Սակայն նա ոչ երբեք իբրեւ
զվեհերոսս լնալ թուլացաւ յիւր
առաքինի ոգւոյն քաջամասնութենէն
մինչեւ 'ի լրումն ամ եւ աւարտեաց
զայն : Ոչ շատ համարեցաւ զայս
անչափ ըղձից մեծագործ ոգւոյն իւրոյ
այլ նոր հիմնարկութեամբ վայելչա-
պէս յօրինեաց զբոլոր սենեակս Սա-
թողիկոսարանին : Եւ առաւել քան
զամենայն այլ էր գերազանց 'ի մե-
ծագործութիւնս նորին . զի զհամայն
շրջապատ ընդարձակագոյն վանիցն՝
լայնահիմն եւ բարձր պարսպաւ փակ-
եաց շուրջանակի . ընդ որ զչարագեալ
հակառակորդ թշնամեացն զբարտե-
ցին զնա առաջի բարձրագոյն դրան

Օսմանեան պետութեան 'ի ժամանակս թաղաւորութեան Սուլթան Մահմուտ բարեկարգիչ արքային, իբրեւ թէ զաշտարակ կամ զքերդ ապստամբութեան շինեալ իցէ 'ի սահմանին Արիւկիոյ: Որոյ արագաւ իբր 1834 թուականին կոչեցաւ Տէր Արախոս Աթուղիկոսն յաթուոյն Արսոյ 'ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս. ուր յանդիման լեալ մեծի Արքային՝ համարձակ պատասխանատուութեամբ սուտ եցոյց զաւարտող զբարատիչս իւր եւ արդարացեալ ազատեցաւ 'ի մահապաշտակ կոչմանէն: Որ յաղագս ազնուաբարոյ եւ վեհանձնական ոգւոյն պատուեցաւ յոյժ յիշխանաց եւ Ամիրայից. որք մեծապէս պաշտօնան կացին ազատութեան նորին եւ սրժանաւոր յարգանքօք հարասիրեալ զարձուցին գնա անդրէն յուրաշէն Աթուռ:

Բաց սաւղ, այն ինչ յառաջին մահադրանէն զերծեալ փութայր անձկով 'ի հոյրենոյն ապստամբարան անդէն իսկ եւ իսկ մերձենայր յերկրորդ մահադուռն դաւաճանութեան եւ մինչ դեռ ուրախ լինել կամէր 'ի մեծագործութիւնս ձեռաց իւրոց՝ 'ի թուխտիս սուրոյ հասակի վախճանեալ երանելին փոխեցաւ. 'ի կենաց աստի յերկնային հանգիստն: Ընդ որ լային անտառք Տորոսեան լեռանց լային ժողովուրդ իրիկիոյ, 'ի սուրմարին համայն միաբանութիւնք մեծի մենաստանին: Զանոյն զրկեալ եղեն առհասարակ 'ի Հայրական դարովս իր խնամոց նորին:

Իսկ որ զառաջար հոյակապ կառոյց բաւ իւրում փափաղանաց. սրժանի եղեւ եւ ինքն առ հովանեօք նորին

հանգիստ առնուլ: Որ հանգոյն Դաւթի սիրեաց զվայելչութիւն տանն Աստուծոյ եւ 'ի նմին ընտրեաց բնակիլ յետ մահուան իւրոյ: Որ տարածամ մահուամբ բաժանեալ 'ի սիրելի հարսէն Եկեղեցոյ՝ կարօտ մընաց կենդանի բարբառով յառագաստին խրախութեան երգս յորինել, գէթ ոսկերովք իւրովք անբաժան կացեալ յանձկարի առագաստէ տաճարին լըցցի փափաք իւրում կարօտանաց:

Այլ ընդ իջանել 'ի գերեզման աթուաշէն Աթուղիկոսին, իջին եւ համայն փառք տան իւրոյ եւ օր ըստ օրէնուազեալ պակասեցան բարեկարգութիւնք վանից եւ վիճակաց առհասարակ. եւ մանաւանդ փառաւոր շուք այնչափ մեծագործութեանցն յառաջին վայելչութեանց իւրեանց անշքացեալ տգեղացան:

Ինդ որ 'ի հայերն ոչ միայն Հայկազուն սիրտ ձնէր ցաւօք. այլ եւ մեծահաջակ Առսակալն Եգիպտոսի (այն է Իպրահիմ փաշայն) մինչ մարտ պատերազմի մղէր ընդ բնակիչս Տորոսեան լեռանց՝ գայր 'ի Արս եւ հայեցեալ ընդ մեծագործութիւն հանդուցեալ Աթուղիկոսին՝ զարմանայր յոյժ եւ սառուել եւս ընդ ահեղաշուք տաճարն. առ որ 'ի զնմին կացեալ արտաքուստ գրաւէր ոգի իւր մտանել դիտել եւ զնորքին դեղնեցեւթիւնս. եւ տեսեալ զանփառունակ մահաբձան իմն առ որմովք յաջակողման տաճարին՝ հարցանէ 'ի մերձ կացելոցն. «եթէ Ոյր է զիրմն այս, ոպատխանեն թէ ոյր է տապան Արախոս Աթուղիկոսին Արիւկիոյ. որ նորոգեաց զայս տաճար: Զայնժամ առ շիրմաւ կացեալ հեռաբարձի կու-

սակալին աւաղական իմն բանիւ ձայն
արկանէր առ ոսկերս հանգուցելոյն :
« Զարթիր զարթիր ոգիդ մեծագործ
առ ի վեր արդ զգլուխդ տարփալի,
տես ո՞վ է, որ առ շիրմաւդ եկեալ
զարմանայ յո՞ժ ընդ պանծալի գործս
շինուածոց քոյն. որք իբրու բարբառ
ով բերանոյ քարոզեն զքաջարութիւն
առաքինի ոգւոյդ եւ ծանուցանեն թէ
ի կենդանութեանդ լեալ ես դու ոմն
մեծագործ ի նահանգիս Արիկիոյ եւ
միանգամայն վեհանձն, որ ի միջի
բռնաւորութեանց ճշեալ անաղատ
կենօք տառապանաց համարձակեալ
ես զայսպիսի մեծագործութեանց ձե-
ռնն արկանել : Երանի՛ էր քեզ եւ
բարեբախտ եւս լինելի դու եթէ առ
ժամանակօք մեր կենդանի լեալ քո
կանգնելի զշինուածս ճոխ եւ փառ-
աւոր ըստ չափու մեծի ոգւոյդ որպէս
եւ հաճելի : »

Եւ յետ խօսելոյ զայս կուտակալն
մեծ՝ զաչս իւր յայսկէյս յայնկոյս
դարձուցեալ յորմն եւ ի կամարս
խորանին տեսանէ, զի ծեփքն առ հա-
սարակ պրծեալ են եւ կաթիլք անձ-
րեւաց իջեալք առ որմովք . զգէմն
բանիցն յայնժամ ի շիրմէ անտի
դարձուցեալ՝ առ կենդանիս խօսի :
« Ափո՞ս մեծի աշխատանաց Աստու-
ղիկոսիս . որ առ ժամանակօք անհոգ-
ութեան ձերոյ տակաւ տակաւ յա-
ւերակ դառնայ : Իր ամօթ մեծ է այս
ձեզ . դա որ զամենայն ջան ի գործ
եղեալ ի փառս ազգին եւ հայրեն-
եաց իւրոց՝ կառուցեալ է զայս վե-
հապանծ տաճար . դուք ի պահել
զայս յարկածից աւերածոց չունիք
բնաւ փոյթ եւ փոխանակ մեծի եւ
րախտեաց վսեմական վեհին, թողուք

այսպէս եղծանիլ եւ ամայանալ յա-
ւերժական յիշատակիս պանծալի
Անուանն եւ որ պարտիք հոյակապ
մահարձանօք պատուել զտապան հան
գուցեալ Բաբունապետին ձերոյ եւ
դրոյմել ի նմա վայելուչ դրուատանօք
զանմահ անուն հայրենաշէն բարե-
բախն : »

Այսպիսի եւ առաւել քան զսոյն
բանս մեղադրանաց խօսէր անդէն
վսեմախոհ Առասկալն եւ որ օտար
էր ազգաւ եւ կրօնիւք, գողթէ
իբրեւ զհամարին ազգակից ազնու-
ական իմն ոգւով զգացեալ առաքինի
հօրն վախճանելոյ մեծագործ յիշա-
տակօք զհեղութիւն վատութեան
յետնորդ կենդանի որդւոց պարսաւել
արժան համարէր : Եւ զայս ստուգա-
պէս պատմեցին մեզ ի ճանապար-
հորդելն մեր անդ որք առ ընթեր
դաեալ մեծի Առասկալն անանջա-
լուր իսկ լեալ էին բանիցն կշտամբա-
նաց :

Բայց արդ յուշ ի քեզ բերեալ
քաջախօս լեր տատէն ուշիմդ ընթեր-
ցող, եթէ եղիպտածին օտարաշխար-
հիկ ոգւոյն՝ հայրենի շինուածոց ամայ-
ացեալ ապաշուք տեսիլ զայսպիսի
ցաւս ազգէ . որով եւ տայ խօսել
աւաղական բանիւ . քանի՞ առաւել
ապա հայկածին եւ հայրենասէր ոգ-
ւոյն սաստկապէս ազգ են տխուր կեր-
պարանաց տեսիլ նախնակերս յիշա-
տակաց : Որպիսեօք պանդուխտ Ար-
ծուոյս Վասպուրականի . որ ոչ եթէ
նման օտարագլինն այնմիկ իբրեւ ըզ-
շուք ստուերաց հարեւանցի անցեալ
ընդ շիրմ Բարեբախն Արիկիոյ . հա-
պա իբրեւ ողբանուէր առ տապանաւ
նորին նստեալ ընդ իրկար հառաչէի

ցաւօք մինչ յուշ գային ինձ առաջին փառք երկնահանգէտ տաճարին մինչ արթուն հովուապետաւն բարեղարդ եալէր բեմն . եւ վերջին անփառունակ տեսին , որ մերկ եւ կողոպուտ դառնէր 'ի նախնի բարեմասնութեանցն իւրոց : Արմրազարդ քոզ գեղաւ պճնեալ հարսինն՝ փոխեալ էր 'ի գոյն սեւութեան . ընդ անուշակ երգոց պարաւոր մանկանց առագաստի , ձայնք ծիծռանց հնչէին 'ի նմա : Եւ այս էր վասն . զի պակասեալ կափուցան բերանք բանաւորացս 'ի վայելուչ եւ յարժանաւոր օրհնութենէն Աստուծոյ . եւ 'ի յանդիմանութիւն մեզ՝ 'ի մէջ տաճարաց բոյնս եղեալ զարարիչն օրհնեն հանապազ անբանւոր թռչունք :

Այլ զուր Սրծուիդ իմ , թախր այժմիկ 'ի ծագաց Բլագանդիոնի հասիր արագադէս 'ի մայրաքաղաքն Սիւմուս 'ի հրաշալէն տաճարն , կաց 'ի վերայ շիրմի մահարձանին , մի իբրեւ ըստ առաջնոյն թախմեալ եւ տխուր , այլ ուրախ եւ զուարթաւէմ թեւաշարժ հրձուանօք ձայն արկեալ առ ոսկերս սրբազան վեհապետին Արաւկոսի , տուր աւետիս խնդութեան հեծող նշխարաց նորին , առա լսել եւ չհանել այլ եւս մրմունջ խորագոյն ցաւոց : Գանդի ահա նորոգեցաւ փարեղի Անուանդ ցանկալի յիշատակութիւն , որ երեսնամեայ մուսացութեամբ թաղեալ ծածկէր առ հողով տապանիդ : Ար 'ի տարածամ շնչմանէ խորշակէ մահուն դաւաճանութեան աւանդ , 'ի միջն Տորոսեան լեռանց վաղաթառամ լեալ թօթափեցար 'ի գուր գերեզմանիդ զօրէն ծաղկանց դարնանագեղ . արդ եկն եհաս քեզ

նոր դարուն գեղեցիկ , որով նորոգիս դու դարձեալ ըստ առաջին վայելչութեան քում . զի յԱջապահեան քաջաղն շառաւիղէդ բուսաւ եւ ծաղկեցաւ գաւազանաւ իշխանութեան Անուանակիցն քո Տէր Արաւկոս նոր ընտիր Աթուղիկոս տանդ Արիկիոյ . որում սպասեալ յուսան տառապեալ ժողովուրդք համայն վիճակաց իւրոց որ հետեւող լիցի ոչ միայն քեզ արիաջան հասապետիդ . այլ եւ նախնի անձնանուէր քաջ եւ հսկող հովուաց որք նմանեալ Տեառն մերոյ Յիսուսի եղին զանձինս իւրեանց 'ի վերայ Լուսաւորչեան հօտին . որոց տեսչութիւն հաւատացաւ նոցա յերկնաւոր հովուապետէն : Ոչ միայն խնամ տանել նորոգութեամբ առ 'ի բէն կառուցեալ պերճ շինուածոց եւ գերապանծ նիւթական տաճարիդ . առաւել եւս Աստուածական եւ հայրադորով խնամօք հոգ տանել հոգեւոր տաճարին Աստուծոյ այս ինքն Բրիտոսեան ժողովրդոց . որք քայքայեալ եւ ամայացեալ են պէս պէս տառապանօք նեղութեամբ , անձկութեամբ , աղքատութեամբ , տղխութեամբ եւ այլ բազմապատիկ վշտակրութեամբ : Զորս յաւէտ վայելուչ է շինել եւ նորոգել Աստուածոյին ուսման հոգեւոր դաստիարակութեամբ . որով աճեալ եւ զարգացեալ հացցին ամենեքեան 'ի չափ կատարմանն Բրիտոսի : Եւ որ արդ իբրեւ անապատ անջուր ծարաւեալէ ամենաբեր երկիրն Արիկիոյ եւ խամբեալ չորացեալ են առ հասարակ բողբոջ բուսոց իւրոց դարձեալ զուարճացին եւ ծաղկեցին արբեալ զձուր առաստաղուի խնամոց : Ար այժմիկ

որպէս զգալի անմշակ կորդայեալ
կայ անբեր եւ անպտուղ, նոր վա-
ռակասէր Եղիմն աշխատութեան ա-
րօրով հերկեսցի եւ լիարուան ցա-
նեսցի ի նմա հատք ցորենոյ աղնիւ
ուսման եւ բարոյական կրթութեան.
որով ի փոքու ժամանակի ծլեալ
ծաղկեցի եւ տացէ պտուղ հարիւր-
ուոր. յորմէ լիապէս եւ կշտապինդ
վայելեալ յազեսցին կարօտ եւ սովա
լլուկ որդիք հայրենեաց քոյ :

Եւս՝ քո հառաչող ոսկերացի շատ
լիցի ի մխիթարութիւն եւ ծանրա-
թախիծ ցաւոցդ ի սփոփումն. որով
փոքր ինչ հանգիստ առցեն նշխարք
մարմնոցդ ի գիրկ առաջանիդ. եւ
ողիդ, որ թաւ յերկինս առաքինու-
թեան կառօք, արեցէ ի վերուստ
զիւր վերարկուն զկրկնակի շնորհ քաջ
արթուն վերակացութեան ի վերայ
Արժաննափր Յաջորդիդ. որ ձայն
բարձեալ ի ներքուստ աղաղակէ եւ
մաղթէ Հայր հայր կառքդ Կիւ-
կիոյ :

ՃԱՌԱՅՐՈՒԹԻՒՆ

Նկարագիր գերաւորն սիրոյ Աստուծոյ-
այն. Հորաբերալ Հայկազուն Օրհնրաց
ի Հոռնու :

Գրուի պատուիրանին սկիզբ : Ա. Տիմեթ Ա. Յ

Ապաքենն ո՞րք իցէ այսմ անծա-
նօթ, զի սուրբ գիրն բովանդակ
հին եւ նոր կտակարան միաբարբառ,
ոչ զայլ ինչ, այլ զսէր միայն առդնեն
խարխիս պատուիրանաց : Զորօրինակ

ի հնումն առաջին պատգամ Ամե-
նակալին բերանոյ՝ այս ի Սինայէ
հրէշէր, թէ՛ «Սիրեսցես զՏէր Աստ-
ուած քո յամենայն անձնէ քուսմէ՝
եւ յամենայն մօաց քոց, եւ յա-
մենայն զօրութենէ քուսմէ :
Ընդ սմին, » եւ արդ Իսրայէլ. զինչ
խնդրէ ի քէն Տէր Աստուած քո
այլ երկնչիլ ի Տեառնէ Աստուծոյ
քուսմէ, եւ գնալ յամենայնի ճանա-
պարհս նորա եւ սիրել զնա : Զայն
ապաւորէր եւ ի զանազան արարող-
ութիւնս օրինաց. բոտ այսմ՝ «Եւ
կերիցեն զմիս—խորովեալ հրով. » որ
է սիրով ջերմեռանդութեան : Եւ
թէ՛ «Արացես խորան տաանիեղեան
. . ի ծիրանոյ եւ ի կարմոյ կրկնելոյ :
Եւ թէ՛ » Մատուցջիք ողջակէզո ըն-
ծայս ի հոռ անուշից Տեառն : Արդ
զինչ աստէն գոյնն կտաւրեալ, զե-
ղեցիկ, հրերմնեան կարմիրն նշանա-
կէ, բայց եթէ՛ զկատարածն պատ-
ուիրանաց՝ զսէր. եւ զինչ՝ ողջակէզն
(այսինքն զոհն ողջոյն կիզեալ) բայց
եթէ՛ զբոց սիրոյն Աստուծոյ, որով
բոլորովին վառիլ պարտիք. եւ այլ
յորով ուրեք զայն ցուցանէ պէս պէս
նմանութեամբ : Բայց մանաւանդ
եւս քան զեւս առաւել ի նորումն,
ինքն ճշմարիտ օրէնադիրն Բրիտոս
բանն Աստուած՝ մեծ եւ նախամե-
ծար ի պատուիրանս, միայն զսէրն
հանդիսացուցանէ. բանիւ եւ արդ-
եամբ : Բանիւ՝ զի ահա՛ բոլոր վար-
դապետութիւնն՝ սէր է. զորօրինակ՝
եւ հարցանողն զկենացն յաւիտենա-
կանաց ժառանգութենէ՝ զայն պա-
տասխանէ, թէ՛ «Սիրեսցես զՏէր
Աստուած քո յամենայն սրտէ քուսմ-
մէ եւ յամենայն անձնէ քուսմէ՝

եւ յամենայն մտայ քոց : Այս է մեծ եւ առաջին պատուէր : Եւ թէ « Զայս արա եւ կեցցես » : Քանզի յայս երկուս պատուիրանս ('ի սէր Աստուծոյ եւ ընկերին) ամենայն օրէնք եւ մարգարէք կախեալ կան :

Արդեամբ՝ որպէս յայտ է ամենեցուն , զի բոլոր անօրինականքն Քրիստոսի՝ պտուղ սիրոյ են մանաւանդ անհուն սիրոյ : Զի է մի առ մի ասել . եթէ ծնունդն , եթէ տղայութիւնն , եթէ շրջիլն յաշխարհի , թէ զանազան անարդանքն , զոր կըրեաց . թէ չարչարանքն թէ խաչն , թէ յարութիւնն եւ թէ համբարձումն : Քանզի ըստ աստուածախօս պատգամին՝ գլուխ պատուիրանին սէր է զորօրինակ , ոչ շինուած առանց հիման , ոչ տունկ առանց արմատոյ , եւ ոչ անդամք առանց գլխոյ . մանաւանդ եւ ոչ մարմին առանց հոգւոյ . նոյնպէս եւ ոչ ամենայն օրէնք եւ պատուիրանք առանց սիրոյ » : Զի ուր չէք սա՝ ամենայն ինչ ընդ վայրէ , եւ ընդունայն համարին է՝ եւ 'ի գուր . եթէ հաւատք իցեն , եթէ մարգարէութիւն , եթէ վարդապետութիւն , եթէ ողորմածութիւն . եւ եթէ մարտիրոսութիւն եւս որ գլուխն է ամենայնի » : Զոր ահա երկնաքաղաքացին Պօղոս գեղեցիկս հաստատէ յասելն , « Եթէ ըզլեզլու մարդկան խօսիցիմ եւ զհրշտակաց . . . եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն , եւ գիտիցեմ ըզխորհուրդս ամենայն , եւ զամենայն գիտութիւն , եւ եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ զերկնս փոխելոյ , եւ սէր ոչ ունիցիմ . ոչ ինչ եմ եւ այլն » : Զի սէր ունի զառա-

ջին գահն յառաքինութիւնս , սէրն է մայր եւ դշխոյ ամենայն առաքինութեանց եւ հոգի նոցին իսկ , որ տեսակաւորէ կենդանացունէ զամենեւին զնոսա առաքինութիւնս . ապա թէ ոչ՝ իբրանհոգի , մեռեալ , բացընկեցիկ եւ ոչ ինչ էին ամենայն առաքինութիւնք :

Իսկ պատճառ զինչ , ահա այս իսկ երեւի , զի ըստ որում՝ յատուկ է առաքինութեանց 'ի յանձնիշխան յազատ կամաց բանականութեան արտաբերիլ եւ այս ոչ ինչ իւրիւր կատարի , եթէ ոչ սիրով : Ուստի բաց յայլոց առաքինութեանց Աստուծայնոց , այլ եւ հաւատն եւ յոյսն՝ յուճակես առանց սորա համարին . զորօրինակ 'ի վերոյ 'ի բան առաքելոյն ասացաւ : Քանզի զինչ է հաւատով միայն ճանաչել , որ եւ 'ի դեռս տեսանի . ըստ այնմ « Գիտեմք զքեզ ո՛վ ես սուրբդ Աստուծոյ » : Եւ զինչ լոկ յոյսն , զոր նախ Արուսեակն յուսացաւ անտանելի յանդգնութեամբ . ըստ այնմ « Եղից զամուսն իմ յամպս եւ եղեց նման բարձրելոյն , այսպէս եւ նախատեղծքն՝ Աստուածս լինել փափաքեցան , բաց 'ի փառաց անտի գահաթիօնցան երկուին եւս , մինն յերկնից 'ի գոփսս , իսկ միւսն 'ի դրախտէն 'ի վայր փշալից » : Եւ քանզի ըստ Առաքելոյն « Հաւատ , յոյս , սէր , սօքա երեքեան . եւ մեծ քան զսոսա՝ սէրն է » : Իսկ ընդէր , դարձեալ նոյն ինքն պատառ խօսնէ « Զի թէ գերազանցեմք մօտք , այն Աստուծոյ է , եւ թէ զգաստաւ նամք , այն ձեր է , զի սէրն Աստուծոյ ստիպէ զմեզ » : Իբր թէ՛ ոչ ինչ ունիմք մեք 'ի ձեռս եւ ոչ որ

մեր իցէ , բայց միայն զկամքն , զոր հաւատաց մեզ արարին կամաց , ինքն իշխան ազատս կառավարել ըստ Օգոստինոսի . « Ո՛չ ինչ այնքան է ընդ մերով իշխանութեամբ՝ որպէս կամքն » : Եւ տեսականորիչ կամաց է սէրն , ուստի սիրով կերպանան ամեր նայն առաքինութիւնք . ապա ըստ Ճշմարիտ բանիս այսմիկ՝ գլուխ պատուիրանին սէր է , բայց է սէր որ վրիպեալ ՚ի ճշմարտութենէ , անհաւճոյ է Աստուծոյ , քանզի չէ ճշմարիտ եւ գովելի սէր , սէր ՚ի հարկէ , սէր երկդիմի , եւ սէր անհաստատ . ուստի ասէ պատուիրանն՝ ՚ի սուրբ սրբոէ , եւ ՚ի մտաց բարեաց , եւ յանկեղծաւոր հաւատոց . ուշիմն ըստ օրինակիս այսմիկ պարտ եւ սրժան է ըստ առաքելական բանին : « Նախ քան զամենայն սէր սերտ ունել » , եւ բուն առարկայ սիրոյն է ըստ ինքեան բարին , որ է նոյն ինքն Աստուածութիւնն , զոր սիրել պարտմք . նախ՝ բնական սիրով . երկրորդ՝ բանական սիրով . երրորդ՝ գերբնական սիրով :

Ահա ՚ի գիւանի աշխարհիս՝ մատեան սխրալի արարչին սիրոյ , զոր ամենեքին կարեն ընթեռնուլ առանց ուսուցչի : Բե՛ր նայեսցուք ՚ի բնականս՝ ՚ի քարինս ասեմ եւ ՚ի տարերս եւ յերկնայինս լուսաւորս եւ յայլս ամենայն , որք թէ եւ զուրկ յղգայութեանց են եւ ՚ի բանէ , բայց որպէս առ արարչագործն ձկտեալ պանան ընդաբոյս սիրոյն թուցիւք ըստ կեդանականի եւ բնական իւրեանց շարժութեան , յոր կարգեցան յարարչէն՝ անմիջապ կատարելով : Մանաւանդ՝ առաւել քան զսոսա ըզ-

գայականքն եւ շնչաւորք , որք դոյզն քան զսոսին հաղորդագոյնք արարչին ճանաչին . կենդանութեամբն իւրեանց : Քանզի զի՛նչ է համագումար պարակցեալ թուիլն նոցա . եւ որք ՚ի ցամաքի եւ ՚ի ջուրս են՝ ընդ միմեանս միաբանիլ , եւ զի՛նչ մշտախոնջ դօտէպինդ . գործաւորութեամբ զիւրեանցն հայթայթել զկեանս , եւ այնքան զճննդոց իւրեանց ինամարկել , եւ թէ ոչ ներգործութիւն սիրոյ որ սոցին միջնորդութեամբ առ արարչն վերաբերի . զի ինքեանք սոսկ նիւթականք եւ զգայականք գորով , ոչ յիմանալին անմիջապէս ունի բերիլ սէր սոցա , որ է Աստուած : Այլ միջնորդաբար ՚ի ձեռն նիւթականաց : Ուստի եւ ՚ի սրբոցն՝ փառաբանակից արարչին օրհնութեան հրաւիրեն ըզսոսին , ըստ այնմ երեք մանկուկն ՚ի հոցին :

Քանզի սէրն անտեղծ Աստուած կաթեցուցեալ հողորդեալ է յաղբերական անպառ սիրոյ իւրմէ անտի յիւրաքանչիւր արարածս ըստ ընդունակութեան աստիճանին . եւ որով ամենեքին , յորմէ ելինն յարարչէն ասեմ , անդէն ՚ի նոյնն դառնան եւ զերին :

Բայց քանի՛ առաւել մարդն , որ կառավար եւ իշխան աշխարհիս ճանաչի՝ ՚ի բնուստ սիրող արարչին է ստեղծեալ , քանզի որոյ ՚ի բարութեանէ անտի Աստուծոյ գորով օժեալ իբր զկողմնացոյցն ՚ի մագնիսէ՝ յամենայնի առ այն բերի , յայն հառաչէ , զայն միայն խնդրէ վանզի բրնական է պատճառելոյն՝ առ պատճառն ձկտիլ , զի ըստ փիլիսոփայի ուրումն՝ որով լինի որ , նովմբ եւ

պահի , ահա կենդանիք միշտ 'ի ջու-
րս գիմեն , քանզի սկիզբն նոցա 'ի
ջրոյ է , ըստ այսմ՝ «Եւ հանցենս
ջուրք զեռունս շնչոց՝ կենդանեաց :»
Եւ ըստ մեծի մասին՝ նախաւ մանկն
եւ պահին , մինչ յելանել անտի
մեռանիլ ոմանց որպէս՝ ձկունքն .
Ըստ այսմ՝ հոգի մարդոյ , միտք եւ
կամք որք անմիջապէս 'ի պարզագու-
նէ Աստուծոյ են , հերձեալ անցան-
կն զամենայնիւ եւ առ այն վերա-
թեւեն , եւ զայն միայն խնդրեն ,
ըստ այսմ՝ «Եւ խնդրեցին երեսք իմ,
զերեսս քո , Տէր , խնդրեցին :» Եւ
առանց նորա ոչ կարեն հանդիլ եւ
սկիզբիլ , որոյ պատճառն է . զի իմա-
ցումն եւ բաղձանք մարդոյ անհուն
իմն են , եւ ամենայն իրք ստեղծա-
կանք՝ հոռեաւորք . ուստի յատկու-
թիւն իմացականի՝ է անդադար խնդ-
րել զայն , որ գեր 'ի վերոյ իցէ . քան
զամենայն բնականս , մինչեւ զայն
զիւր բաղձալին եւ սիրեացէ զայն՝ որ
պարտութիւն է ամենայն բարու-
թեանց . յորում ոգի առեալ հանդ-
չի մարդ իբր յիւրումն կեդրոնի ,
եւ այլ ոչ շարժի . եւ այսմ օրինակ լի-
ցի բոլորակ ձեւն , յորոյ 'ի կիսէ-
ձրգեալք գիծք անսահմանք՝ ոչ իւրք
պարագրին , բայց եթէ շրջասփիւս
բոլորածեւ երեսօք կամ մակերեւու-
թիւն . զինա գլուհէ զայն ամենայն
գիծս . այսպէս զանսահման ծարաւ եւ
զտենչ բաղձանաց հոգւոյ՝ նա միայն
բովանդակապէս պարագրեալ հան-
գուցանէ , որ է անսահման բարի .

Ահա զայս բնութիւնս մեր ինքնին
ապացուցանէ մեզ այսօրինակ իւրով
բերմամբն , զոր ոչ որ կարէ ժխտել
թէ եւ լեռնակեաց իցէ եւ վայրագա-

սուն անասնական բարոյիւն :

Քանզի բնական իրաւունքն աղա-
ղակէ , զի իւրաքանչիւր որ բոլորով
անձամբ սիրեացէ զայն , յորմէ ու-
նի բոլորովմբ զինքն , ապա ո՞ր
այսմ անլուր լիցի , եւ ըստ մարգա-
րէական կշտամբանաց՝ որպէս ի՞ժի
եւ քարքի խցցէ զականջս իւր . զի մի
լուիցէ նա զձայն թուլի ճարտարի ,
քանզի ձայնողն 'ի ներքուստ է եւ
ոչ դարձարի 'ի ձայնելոյ . Ապա թէ ոչ
կշտամբեալ լինէալ մեք յանասնոց
անբանից , մանաւանդ մեք մեզէն
կշտամբեալ զանձինս մեր , եւ 'ի բե-
րանոյ մերմէ ըմբռնէալ . զի ահա ան-
բանքն սիրեն զորս կերակրեն զնոսա ,
թէպէտ եւ կատարիք իցեն՝ 'ի քաղց-
րութիւն սիրոյ զիջանին , որպէս 'ի
շունս երեւի , որք բազում հաւա-
տարմութիւնս զարմանալիս ցուցա-
նեն առ մարդիկ հպատակութեամբ
բնական ազգմանն . քանզի սէր 'ի բը-
նուստ է բարեաց ընդունողին՝ առ
բարեբար : Առաւել քան զսոսա մար-
դոն շարժի բնականապէս 'ի սէր բա-
րերալին . քանզի ո՞ր զկերակրիչն
զապրուցանողն , զգեցուցիչն , զաղա-
տիչն 'ի վտանգէ , եւ զայլն , որ բա-
լիս հասուցանեն ինքեան՝ ոչ սիրէ .
ո՞ր զեղբարսն իւր եւ զծնողն ոչ
սիրէ : Արդ եթէ գիտէ զայստօրիկ
սիրել , զի յորոց ոմանք օգնիչ պահ-
պանութեան կենաց են , եւ ոմանք
երկրորդ պատճառ գոյն մարմնա-
կանի . իսկ որչափ սիրել պարտի զայն
որ ստեղծ զինքն յոչնչէ , ոչ միայն ըզ-
մարմնն այլ եւ զհոգին . ոչ միայն
գամ , այլ բիւրիցօ բիւր յամենայն
'ի վայրկեանի , նախախնամութեամբ
անմիջապէս կամ 'ի ձեռն երկրորդ

պատճառաց : Ի վերայ այս յորդոր
են զմեզ եւ ձիւք բնականք սիրել
զարարիչն . քանզի ահա նման մար-
դոյ չիք յարարածս , որ այնչափ
պատուական վայելչակալմ մարմնով ,
եւ հոգւով 'ի պատկեր Արարչին կե-
բեալ , բանականութեամբ պերճաց-
եալ , եւ ընդունակ երանական կե-
նաց , եւ յերկոյսունջ սխրալի մասանց
('ի հոգւոյ եւ 'ի մարմնոյ) շաղկապ-
եալ ամենաճարտար արուեստիւ :
Թող զուգընթերթ երկնանկատ հա-
սակն , որ չէ ըստ պաճարեղինոյ
գլխակոր , միայն ստորնայնոց լինել
'ի խնդիր . այլ ի վերայ երկուց ուրիշ
կացուցեալ դէպ ուղիւ յերկինս ,
զի ուսցուք միշտ զվերինն նկատել որ
է Աստուած եւ սիրել զնա , զորմէ գրէ
մեծն հսկող : Յայս իսկ է մասն հը-
րային 'ի խառնուած բնութեանս . զի
տապով սիրոյ արարչին բորբոքեսցուք
եւ վառեսցուք սրտիւ : Արդ զորօրի-
նակ 'ի պակասիլ բնական ջերմութեան
մարմնոյ անմիջապէս հետեւի մահ . նոյն
օրինակ եւ 'ի պակասիլ բնական կեն
դանացուցիչ ջերմութեան հոգւոյ , -
այն ինքն է սերն Աստուծոյ , որպէս
եւ ոմն առե « Գիտեմ ո՞վ հոգի իմ ,
զի սերն է կեանք քո » : Անգէն ան-
միջապէս մահ հոգւոյ հետեւի , որ
է մեղք : Բանզի զմեզքն իսկ այս-
պէս սահմանէ Օգոստինոս « Արհա-
մարհել զանփոփոխ բարին , եւ յարիլ
փոխակերպ իրողութեանց . եւ
այս ոչ ինչ իւրիք , բայց եթէ պակա-
սութեամբ Աստուածային սիրոյ » :
Տեսնո՞ւ ուրեմն զի առն իւրաքանչիւր
բնական է սիրել զԱրարիչն , ապա
թէ ոչ՝ հեղինակն արդարութեան
Աստուած զայն ոչ պահանջէր ,

եթէ ոչ պահանջէր , եւ ոչ պակաս-
ութիւն սորա (այս ինքն սիրոյ) լինէր
մեղք , որ է մահ հոգւոյ , քանզի
մեղքն 'ի բնական կարգի ընդ դէմ
բնութեան է : Ահա 'ի պակասութե-
նէ սիրոյն այս՝ կորեան ջնջեցան որ
յառաջ քան զճոհեղեղն էին մարդիկ
անհամար , որպէս ապառնայ թէ « Մի
մնացէ ոգի իմ 'ի մարդկանդ յայդ-
միկ յաւիտեան , վասն լինելոյ գոյս
մարմին » : Ոյր աղաբաւ եւ Սողոմ
Գոմոր երկնաստեղաց բոցովն կիզեալ
յանհետս եղեւ . զի որով մեղանչէ
դք նովինը եւ պատժի , բառ որում
պակասութեամբ ջերմեանդութեան
Աստուծոյ մեղան , ուստի արժանա-
պէս հրակիզեալ կորեան : Մոյնպէս
եւ Նինուէ կործանեաց էր , վասն
այնմ « Զի ել աղաղակ չարութեան
նորա առ իս » : Բանզի որք միանդամ
խառորեցուցանեն զայս երկնապա-
ստուածութիւն սերն բնութեան ,
այնուհետեւ անձնադրաւ յամենայն
մարմնութեան արշաւնն : Արդ գիտե՞լի
է թէ եւ պակասութիւն սորին մեծ
ապականութիւնս ներգործէ 'ի բնու-
թեանս . բայց եւ ոչ գոյն բաւական
է ընդ զպարտ կատարելութեան
սիրոյ . ուստի է եւ այլ միւս սեր յա-
տուկ եւ սեպհական մարդկային սեռի
որ այն ինքն է բնկերասիրութիւն .
որով լինի մարդն կատարեալ Աստ-
ուածասէր եւ առաքիլն . զորմէ խօ-
սեսցուք յերկրորդ մասին :

(Երրորդագլխոյ է :)

ԼԱՄԱՌԹԻՆ

Հոգեվար Բանաստեղծ :

Օրերուս գեռ լեցուն բաժակը
կոտրեցաւ , կեանքս երկարատեւ
հառաչանքներով՝ ամէն մէկ շնչա-
ռութեանս կը փախչի . ոչ արցունք՝ ոչ
ցաւ՝ կարող են զանի արգելելու ,
եւ մահուան թեւը զիս լայող պղծն-
ձին վրայ կեցած , ընդ միջեալ ձայնե-
րով՝ իմ վերջին ժամըս կը զարնէ .
պէտք է հեծել , պէտք է երգել :

Երգենք , վանդի մատուցիս գեռ-
քնարին վրան են . երգենք վանդի
մահը՝ կարասին պէս ինծի ալ ուրիշ
աշխարհի մը եղբորը , գեղանուագ
ձայնմը տուն կուտայ . այս ձայնը՝
իմ հանձարիս ինծի տուած երջանիկ
մէկ նախազգացումն է . որովհետեւ
մեր հոգին՝ մի միայն սէր ու ներդաշ-
նակութիւն է , թող անոր հրաժա-
րականաւ Աստուածային երգ մը
ըլլայ :

Քնարը կոտրելու ատենը աւելի
վսեմ ձայն մը կը հանէ . լապտերը
մայրելու վրայ , յոնկարծ նորէն կը
վառի , եւ աւելի պայծառ լուսով մը
կը փայլի . իր մարեղէն առաջ . կարա-
պըն իր վերջին վայրկենին երկինք կը
նայի . միայն մարդն է որ աչքերն ետ-
ին դարձուցած՝ իր օրերը կը համրէ
զանոնք լալու համար :

() Երբն ի՞նչ են որ մարդ անոնց
վրայ լայ . արեւ մը ու արեւ , ժամ
մը ու ժամ մը . այն եկած ժամն՝
անցածին նման է , եւ մէկ ժամուն
բերածը միւսը կը խլէ . աշխատանք՝

հանդիստ ու ցաւ , երեւմն ալ երազ
մը՝ անա՛ այգ , ապա կուգայ ցայգ :

Ո՛հ , անի թող լայ , որ իր կատա-
ղի ձեռքերը բաղեղի մը պէս՝ տարի-
ներուն կտորվանքներուն յարած ,
կը տեսնէ որ իր յոյսն ալ ապագային
հեռ ջուրի պէս կը վազէ կ' երթայ ,
խիկ էս որ երբէք արմատ չեմ ձգած
երկրի վրայ , կերթամ դիւրութեամբ ,
այն թեթեւ խոտին պէս՝ զոր գիշեր-
վան հովը կը վերցնէ :

Բանաստեղծը նման է այն անցու-
ւոր թռչուններուն , որ իրենց բոյնը
երբէք ծովեզրը չեն շիներ . որ ան-
տառներուն ճիւղերուն վրայ երբէք
չեն թառիր . անհոգ կերպով՝ ալեւոց
հոսանքին վրայ օրվելով՝ ծովեզրին
հեռուէն երգելով կ'անցնին կերթան ,
եւ մարդս անոնց ձայնը միայն կը
ճանչնայ :

Այն հնչող լարին վրայ երբէք
ուրիշ ձեռք մը՝ իմ նորախրժ ձեռ-
քս չի վարժեց զարնելու : Մարդս չի
կրնար ուսուցանել ինչ որ Աստուած
կազդ է . վտակ դէպ ՚ի վար վնդելը ,
արծիւն ազատ թռուվիճ օդը ձգքելը
մեղուն ալ իր մեղրը շինելը չի սովոր :

Պիլինձը իր բարձր կայանքէն թըն-
դալով , հարանիք ծնունդ կամ մահ
հոչակելու համար , սրբազան մուր-
ճին տակ՝ փոխ առ փոխ կերգէ ու
կարտատուէ . երբեմն ես ալ այն բո-
ցով մաքրած պղնձին պէս էի , եւ
իւրաքանչիւր կիրք՝ իմ հոգւոյս զար-
նելով , վսեմ ներդաշնակութիւն մը
դուրս կը հանէր :

Վստիկ ալ հողմահար քնարը գի-
շերն ՚ի բուն իր օգական գանգատը
ջուրերուն շշուկին խառնելով , ինքն-
իրեն կը ձայնէ ՚ի շունչ զեփիւռին :

ճամբորդ մարդը կանկ կառնէ, հիւ-
նայով լրամբին ժողի կրնէ կը զարմա-
նայ, եւ չի կրնար իմանալ որ այս չը-
նայխարհիկ հառաչանքներն ուրկէ
կուգան :

Իմ քնարըս շատ անգամ արցունք-
ներով թրջեցաւ . բայց արցունքը
մեղի համար երկնային ցօղէ, մշտա-
պայծառ երկնի մը տակ սիրտը չի հա-
սուննար . ջախջախած բաժակին մէ-
ջի բարունակին հիւթը կը հոսի, եւ
թողմամբ բալասանը՝ զինքը կոխկը-
տող ոտքին տակ անոյշ հոսմը կը որդե-
ռէ մարդուս քայլերուն վրայ :

Իայց ուր է ժամանակը . չէ՛ ի մի-
ջի, բայց ուր է փառքը, ո՞հ ինչ
պէտք է այն անտի ձայնի մը արձա-
գանգը՝ զոր դար մը ուրիշ դարի կը
մատուցանէ որ այն անունը . ապագային
փալկիլուն խաղալիք է . դուք որ ապա-
գային մէջ փառքին իշխանութիւն կը
խոստանաք, մտիկ ըրէք սա իմ քնարիս
ընեիք ներդաշնակութիւնը . հովերն
արդէն նոյն փառքը ռոփն տարին :

Ո՛հ, մահուան նուազ շնչին յոյս
մը տուէք, ինչ, այս թռչող ձայ-
նին յիշատակը, դատարկ գերեզմա-
նի մը բոլորը միշտ պիտի թնդայ մի .
հոգեվարիմը հառաչանքը ինչ, անէ
փառք ըսածնիդ . բայց դուք՝ որ բա-
ղում ժամանակ կը խոստանաք անոր
յիշատակին, դուք մահկանացուներ՝
ունիք երկօւ օր ապրելու :

Երկինք վկայ թող ըլլայ յորմէ հե-
տէ կենդանի եմ, իմ շրթունքներս
առանց ծիծաղելու երբեք չեն հըն-
չած այն մեծ անունը, զոր մարդկա-
յին զառանցանքն հնարեց . որչափ
աւելի այս բառը սեղմեցի այն չափ տլ
ունայն դտայ, եւ՝ վերջապէս մէկդի

նետեցի նման չոր կեղեւի մը զոր
մեր շրթունքն ընդունայն կը ծրծեն :

Երեղակարծ փառքիմը ընդունայն
յուստի՛ք՝ անցաւոր մարդը զինքը
ընդ քարշող հոսանքին ձեռքը կու-
տայ անուն մը՝ որ երթալով երթալով
կը տկարանայ . ժամանակին ալիքը
կը խաղայ այս փայլուն մնացորդին
հետ, դարէ ի դար կը ծրփծփայ,
առաջ կընթանայ՝ կիյնայ մոռացու-
թեան խորխորատին մէջ :

Ես անեզը անքնեցուն անուն մի ալ
ես կը նետեմ . թող անիկայ հողմին
աւ օդին հաճոյքին ձգուած՝ ջուրին
տակ սուղի կամ վրան լողայ, ատուլ
ես աւելի մեծ պիտի ըլլամ, եւ ըն-
դէր, անուն մի է միայն . բարեկամ,
կարապն՝ անհուն կամարները թռ-
չեա՛ծ ատենը կը տեղեկանայ արդեօք
որ իր թեւերուն ըստուերը չնչին մար-
դիմը վրայ դեռ կը ծածանի :

Եւ ինչո՞ւ համար կերգէիր . հար-
ցուր սոխակին . ինչո՞ւ համար դիշերն
ի բուն իր անուշ ձայնը՝ ծառերուն
հովանիին տակ հողովող վտակներուն
քաղցրաձայն շշուկին կը խառնուի .
բարեկամներ . ես կերգէի ինչպէս
մարդը կը շնչէ, թռչունը կը հեծէ,
հովը կը հառաչէ, ջուրը վազելով կը
մըրմընջէ :

Հառաչանք մը կսկիծ մը ընդու-
նայն բան, մահուան թեւովը հոգիս
յերկինս կը թռչի, կերթամ, ուր որ
աչքերըս յոյսին փայլելը կը տեսնեն
կերթամ ուր որ իմ քնարիս ելած
ձայնը կերթայ, ուր իմ ամէն հառա-
չանքներս գնացին :

Ինչպէս որ թռչունը՝ մահուան
բառերներուն մէջէն կը տեսնէ . ա-
սանկ ալ իմ հաւատքըս որ հոգւոյն

աչքն է՝ իմ խաւարս ճղքեց . իր մարդարէական ազդեցութիւնը՝ ինծի իմ վիճակըս յայտնեց . իմ հոգիս քանի անգամ ապագային դաշտին մէջ՝ բոցեղէն թեւերու վրայ մինչեւ յերկինս սլանալով մահէն առաջ անցաւ :

Իմ խաւար բնակութեանըս վրայ երբեք անուն մի գրեք . իմ ստուերս շերմի մը բեռով մի ծանրցունէք . քիչ մը աւազիկ , ո՛հ անոր ալ աչք չունիմ , միայն հազիւ թէ բաւական տեղ ձգեցէք , որ գերեզմանիս վրայէն անցնող խեղճը երկու ծռակը կարենայ վրան դնել :

Հատ անգամ ստուերին ու լռութեան գաղտնիքին մէջ , դադարի մը վրայի կանանչէն աղօթքը վեր կոտանու , ու կերթայ մահուն քով յոյսը կը գտնէ . այն մարդը՝ որուն մէկ ոտքը գերեզմանին վրայ է , պակաս կապուած է աշխարհի . հորիզոնը նուազ ընդարձակէ , եւ հոգին աւելի թեթեւ՝ նուազ աշխատութեամբ երկինք կելէ :

Կտորեցէք . հովերուն ալիքներուն բոցերուն տուէք սա իմ քնարըս , որ մէկ ձայն մը ռնկի հոգոյս պատասխանելու համար , հիմա սերտվե՛նեւ ըսն քնարը՝ իմ մտաւորներու տակը պիտի սարթի . վաղ ուրեմն անոնց պէս անմահ զառանցանքով մը ազդելով , կարելի է քնարիս ներգաշնակութեամբը՝ իմ ձայնիս վար կախված երկինքներու պիտի առաջնորդեմ :

Քիչ ատենէն . . . բայց մահուան ծանր ու համր ձեռքը կուգայ լարին կը դալի , լարը կը կոտրի եւ օղին մէջ՝ անշշուէ ու ողբադին ձայն մը կը ձգէ . քնարըս սառած կը լռէ

աւասիկ . . . բարեկամներ դուք առէք ձեր քնարը , եւ թող իմ հոգիս ալ՝ ձեր սուրբ ներդաշնակութեան ձայնովը մէկ աշխարհէն միւս աշխարհն անցնի :

Թարգմանեալ .

Գարեգին Յ. Փափաւեան :

ՆՐՕՆԱՍԻՐՈՒԹԻՆ .

Զգացումն Աստուծապաշտ ոգւոյ :

Սարգիս երկիւղած եւ առաքիւնի որք կատարեալ են 'ի հանդէս Աստուծապաշտութեան եւ զգուշանան միշտ պահել զպատուիրանս Տեառն . արդար եւ յոյժ սրտմտեալ ցաւս կրեն 'ի ներքուստ մինչ զաչս յածեալ ընդ աշխարհ տեսանեն ըզխառնագնաց վարս մարդկանց . որք թիւրեալ մօզք թողեալ զօրէնս եւ զհրամանս Աստուծոյ առ օտն արկեալ՝ երթան զհեռ կամաց սրտից իւրեանց . Որոց վասն Աստուծապաշտ անձն հեծեալ հառաչէ եւ համարձակի աւել ըստ Դաւթի . « Հայէի յանագործս եւ մաշէի . զի զպատուիրանս քո ոչ պահեցին » . Եւ երբեմն եւս յուսահառեալ ինքնին դատաստան առնէ 'ի միտս իւր՝ իբրեւ թէ 'ի բիւրաւոր եւ անհամար ազգս մարդկան չիցէ որ , որ առնիցէ զկամս Տեառն . Ուստի աղաղակ բառնայ յայնժամ ըստ նոյն մարգարէին . « Ամենեքեան խտորեցան 'ի միասին եւ անպիտանացան » : Ոչ որ է որ առնէ զբարի եւ չէ որ

մինչեւ 'ի մի' :

Այսպիսի ոմն լեալ է իբր քառասուն տարի յառաջ մեծատոհմիկ Թօնմասեան Աղա Մարգար Վանեցի, որ կատարեալ գորով 'ի վարս Աստուածապաշտութեան եւ միանգամայն գրասէր եւ հմուտ սուրբ գրոց: Ուստի որպէս ասորութիւն է Աստուածապաշտ եւ հանձարեղ անձանց ոչ միայն բանիւ բերանոյ հառաչել յաւով 'ի վերայ Թշուառութեանց աշխարհի, այլ եւ սրտառուջ բանաստեղծական չափաբանութեամբ նկարել զպատկերս ցաւոց: Բրգիսի լեալ է յիշեալ առաքինի անձն. որ զորի նախաձառութեան յաճին իւրում բերեալ, իբր 'ի դիւրութիւն ցաւակիր սրտից իւրոց յօրինեալ է ըզհետեւեալ ոտանաւորդ. որոյ 'ի սպառուած իւրաքանչիւր պարբերութեանցն զոչ մնաց աւարտէ: Եւ այսօրինակ ողբերգութեանց՝ նախ կին օրինակ եղեալ է իսկ Բերիացի Յոհաննէս սարկաւադ, որ եւ նոյն ոգւով շարժեալ վայելչապէս հիւսեալ է զեղանակ բանից ողբերգութեանց որոյ սկիզբն է « Մենացիր անձն իմ խղճալի եւ այլ » :

Այլ 'ի վերձանելիդ քո զայս հիւսուած ողբոց, ո՞ ուշիմդ ընթերցող, ծանիր քաջ՝ թէ բանի՞ ծանրագոյն Թուին կրօնաւէր եւ աստուածասէր աչաց տեսանել զանառակ վարս խառնակեղիկ մարդկանց. որք զբարս եւ զօրէնս մարդկութեան Թողեալ՝ առանձուրէն կենցաղավարին. յորոց տեղի տուեալ խորշի աստուածապաշտ անձն՝ զի ոչ երբէք հնար է լուսոյ առաքինութեան՝ միաբանիլ ընդ խաւարին մոլութեան: Բանպի որպէս

ծանր եւ դժուարին Թուին արդարք առաջի ամբարշտաց զի մի յանդիմանեցին գործք իւրեանց 'ի սրայծառ լուսոյ առաքինութեան նոցին. այսպէս առաւել եւս ծանրագոյն Թուին արդարոց աչաց անհամեմատ եւ պարսաւելի վարք աշխարհասիրաց:

Ուստի մի որ մեղադիր լիցի հանդուցեալ հեղինակին ողբագրութեանցոյ. որպէս թէ՛ չափաղանց անյուսութեամբ յարմարեալ է զբանս իւր յաղագս խոստա պակասելոյ յաշխարհէ. առաքինի մարդկանց. վասնզի 'ի հոգեգիր մատենան նախնեաց մերոց եւ մանաւանդ Աստուածաշունչ գիրս 'ի բազում տեղիս երեւին օրինակք սոսալիս չափաղանց անյուսալից ողբոց, որք զսիրտ ընթերցողաց ճմլեցուցանեն եւ յորդորեալ շարժեն միանդամայն յուղղութիւն առաքինի վարուց եւ հանեալ 'ի Թուոյ անպիտանաց խոտորելոյ՝ դասեն 'ի կարգս առաքինասէր եւ աստուածահաճոյ անձանց, որք թէպէտ սակաւաթիւ՝ այլ մինն 'ի նոցանէ պատուականագոյն է քան զբիւրաւոր մարդիկ՝ եւ բառ պօղոսի բանին չարժէ բովանդակ աշխարհ գին միոյ 'ի նոցանէ:

Այսպիսի են ահա ճշմարիտ կրօնասէրք, որոց ծանր Թուելով ճանապարհք չարախնդիր վարուց անագորոյն մարդկանց զօրհանապաղ վշտացեալ մաշէին 'ի սիրտս եւ զայսօրինակ ողբս յօրինեալ սղային 'ի վերայ մալորաշաւիղ գնացից նոցին եւ 'ի վերայ պէս պէս Թշուառութեանց աշխարհի. յորում առաւելուն օրըստօրէ՛ չարք եւ նուազին բարիք:

Յօրինելալ Մեծապահիկ հանգուցեալ Մարգար Աշոյի
 Թօխման վանեցոյ :

Ար ես Դաւիթ , առ տաննդիդ , եկ հար ընդիս ողբալով .
 արդ խոտորեալ ամենեցուն զԱստուած խնդրող ոչ մընաց :
 Չեք որ պահէ ըզքաղցր օրէնս տիրականին հրամանաց ,
 համայն օրէնք թողան 'ի բաց եւ վրէժանդիր ոչ մընաց :
 Աշմարտութիւնք 'ի բերանոց խաբառ բարձեալ նուազեցան ,
 այր ընդ ընկեր խօսի նանկր , լեզու արդար ոչ մընաց :
 Ըմենայն որ 'ի չարն երթայ , զինքըն կրթե մըշտապէս ,
 մարմին դարձան բոլոր մարդիկ , հոգեւոր որ ոչ մընաց :
 Միտք համայնից միշտ 'ի չարիս հակամտեալ հեռեւին ,
 սրճանացեալ մընան 'ի նմին , յետքս դարձող ոչ մընաց :
 Ար 'ի նորոյն Սեթայ ծնաք , որդիք եղաք , ո՛հ , Ասցենի ,
 արժանի եմք ջրով կորնչիլ , արդարըն Այ ոչ մընաց :
 Չայն ուրազին միշտ քարոյէ Բրիտոսակաղճ տապանին ,
 արիք մըտէք 'ի վայրն ազմտ , լսող երբէք ոչ մընաց :
 Կիւնն թըռչունք երամովն 'ի դիրկ վայտն ապաստան ,
 սեռք բանաւորք հեղձան 'ի ջուր , ո՛հ , ազատեալ ոչ մընաց :
 Կիսակք ալեաց փն կենցաղոյս զմեզ տարբերեն 'ի կորուստ ,
 աղաղակեմք ըստ Պետրոսի , ձեռքն սատար ոչ մընաց :
 Մոյ , սուր սատիկ , մահաարածամ , ահեղ խորշակք դետնաշարժք ,
 չորեքուսէ զմեզ պաշարեալ , այցելութիւն ոչ մընաց :
 Ըմենայն որ վիրաւորեալ անկեալ հեծէ ողորմուկ ,
 ուր խեղ ձեռքն բրժէլին , դեղ եւ դարման ոչ մընաց :
 Սիւտք նեղութիւնք անհնարին պարապատեալ տանջէ զմեզ ,
 'ի սուգ 'ի լաց նրսաեալ ողբամք , ուրախութիւն ոչ մընաց :
 Օտէք անխաղաղք լեալ են այժմոյս , յուղեալ պոյթեն գոռալով ,
 նաւք խորտակին յալեաց սատիկ , նաւահանգիստ ոչ մընաց :
 Չեռս 'ի ծնօտի երեալ ողբան յուսաբեկեալ նաւատիր ,
 դոյզըն տախտակ ազատութեան եւ այն երբէք ոչ մընաց :
 Եթ թըքաբեր հոգմունք հընչեալ , միշտ անցաճող եղանակ ,
 ծով եւ ցամաք վըրդովելով , տեղի հանգիստ ոչ մընաց :
 Իքուն մեղաց նիւհեալ խորդամք իբրու զփակչոյն այն Յովնան ,
 առ նեղութեան կարդող առժտեր ըզդատտ ողի ոչ մընաց :
 Հօտք լուսակիղըն պակասեալ , երամք այժից բաղմանան ,
 զայլոց գողոց կերակուրք յոյժ , պաշտպան հօտին ոչ մընաց :

Ո՛հ , 'ի յոռից մինչեւ 'ի դուռն չիք տեղի ողջ 'ի մարմին ,
 անդամքն ամէն վնասուրեալ , ձեռքն պատիւ ոչ մընաց :
 Արդ ո՛ւր իցեն օրէնքադիր հարք եւ նախնիք մեր ըզգօն ,
 օրինապահք բազում էին , բազմաց եւ մինն ոչ մընաց :
 Անուշահոտ ծաղիկք դաշտաց փռչապատեալ ծածկեցան ,
 վարդք եւ շուշանք թառամեցան , դեղ տեսութեան ոչ մընաց :
 Սուգ առեալ են տունիք այգեստանք որդովք իւրեանց գինեւեր ,
 կոխան եղեն երթ եւ եկաց , ցանկ շրջապատ ոչ մընաց :
 Բըղիմունք առատ ջուրց պահասեալ ժամէ 'ի ժամ նըւազին ,
 կաթնահանգոյն ցուրա աղբերաց , համ քաղաքութեան ոչ մընաց :
 Պըտուղք ծառայուն թօթափին ծաղկովք իւրեանց ապաժամ ,
 ճիւղք յարմատոցն չորանան , պըտղաւէտ տունկ ոչ մընաց :
 Փոխան բարեաց չարիք բըղխի եւ օք առաւ բաղմանայ ,
 բերքն բարեաց վատեալ ծախին , ճիւղ բարութեան ոչ մընաց :
 Արիւն ընդ հող միշտ շաղախի , երկիր ինքնին վայ դռէ ,
 բարինք պայթեալ աղաղակեն , սիրտ երկիւղած ոչ մընաց :
 Շինուածք երկրի յոյժ աւերեալ , քաղաքք եւ գիւղք հրձիկք լեալ ,
 դարձան բնակին 'ի յաւերակ , կրկին շինող ոչ մընաց :
 Ո՛ւր են չըքնաղ մեծ ապարանք պերճ աշխարհին մեր Հայոց ,
 իսպառ քանդեալ կործանեցան բնակիչ նոցին ոչ մընաց :
 Ար քան դամէն աշխարհ պարծէր ժողովրդօք բիւրաւոր ,
 արդ անգաւակ լեալ ամաչէ , պարծանք երբէք ոչ մընաց :
 Ո՛ւր են մըշակք հընձոց խնամիչք , ժողովելոյ չունին փոյթ ,
 հունձք ոռնակոխ , թըռչունք կերին , հատ ցորենոյ ոչ մընաց :
 Բաղք եւ ծարաւ յոյժ սաստկացեալ , աղքատք հեծեն 'ի սոլոյ ,
 դրանէ 'ի դուռն շըրջին մուրողք , ընչիւք փաթեամ ոչ մընաց :
 Պանդուխտք շըրջին երկրէ յերկիր կոշկոճելով տաղնապին ,
 անյարկ անտուն կան 'ի փողոցս , ո՛հ , ժողովող ոչ մընաց :
 Թէ ոք տեսցէ զկարօտ եղբայր , զաջըս խընու զանց առեալ ,
 գութ ոչ շարժի , սիրտ ոչ գըլծայ , կարկառող ձեռն ոչ մընաց :
 Այ խըղճուրի որբք եւ այրիք որպէս կարէք համբերել ,
 ծանրացան յոյժ ձեր տառապանք , մըխիթարանք ոչ մընաց :
 Սերկ բոկանի շըրջին յողովք 'ի ձմերանի ցըրտահարք ,
 զոփեալ դողան սառին անդամք , պատըսպարիչ ոչ մընաց :
 Եղբայրք երկու 'ի մի սեղան , մինն ուտէ ցյադ միւսն ոչ ,
 մինն 'ի խրախճանս եւ միւսն 'ի լաց , սէր սեղանոյ ոչ մընաց :
 Հըզօրն զանզօր միշտ կըլանէ զերդ ըզդըլբին ձկունս մանրիկ ,
 եւ ուռուցեալ յըղիմանայ յոյժ , խիղճ այնպիսոյն ոչ մընաց :

(Մնացեալն իմիւս լերկին)

1850

THE NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX TILDEN FOUNDATION

500 N. 5TH ST. NEW YORK, N. Y.

1850

THE NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX TILDEN FOUNDATION

500 N. 5TH ST. NEW YORK, N. Y.

1850

THE NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX TILDEN FOUNDATION

THE NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX TILDEN FOUNDATION

500 N. 5TH ST. NEW YORK, N. Y.

1850

THE NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX TILDEN FOUNDATION

500 N. 5TH ST. NEW YORK, N. Y.

1850

ՑԵՆԿ

ՊԱՐՈՒՆԱԿԵԱԼ ՆԻԹՈՅ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

Մեծագործութիւն Հանգոցեալ Կիրակոս Ազգասէր Կաթուղիոսի մեծի տանն Կիլիկիոյ : 98

ՂԱՌԱԳՐՈՒԹԻՒՆ

Նկարագիր գերագոյն սիրոյ Աստուածային . Հարաբերեալ Հայկազուն Օրիորդաց ՚ի

Հռոմէոս : 102

Հոգեկար Բանաստեղծ : 107

ԿՐՕՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Զգաթումն Աստուածապաշտ ոգւոյ : 109

ՉԱՓԱԿԱՆ ԲԱՆԲ

Յօրինեալ Մեծատոհմիկ Հանգուցեալ Մարգար Ալայի Թօխմախեան վանեցւոյ : 111

ՊԵՅՄԱՆԻՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարեկան գին 40 ՂԵԼՈՒՂ :

Մի ամսեայ տետրակին 4 :

Պօլսէն դուրսը երթալու ճամբուն ծախքը առնող պիտի վճարէ :

ՏԵՂԻՔ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԻ ՍՏԵՃՄԱՆ

Ի Պօլս գրավածառ պարոն Յարութիւնին եւ պարոն Պաղտատարին սենեակները որ ՚ի Մէրճան :

Ի Զմիւռլին ուսումնասէր պարոն Սարգիս Գրիգորեան տէր Յովհաննու Միլզայեանց վաճառեցի :

Ի Կարին տէր Ներսիսեանց մեծարգոյ Խաչատուր խան :

Ի Վան Թերլէմէզեան պարոն Մկրտիչ :